



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն**

ք. Երևան

«05» 08 2021թ N^o 633 Լ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N2075-Ն որոշման 3-րդ կետով (այսուհետ՝ Որոշում) և Որոշման հավելվածի 5-րդ կետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի և մրցակցության ոլորտների կարգավորման ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովին՝
 - 1) համագործակցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության հետ՝ սույն հրամանում սահմանված չափորոշիչներով կարգավորման ազդեցության գնահատման մեթոդաբանության մրցակցության ոլորտի մասով ուղեցույցների մշակման նպատակով,

2) մրցակցության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն
իրականացնելիս առաջնորդվել սույն հրամանի հավելվածով հաստատված
չափորոշիչներով և արդյունքները տրամադրել Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարությանը:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

8/5/2021

X 

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KERBYAN VAHAN 1110760124

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Ներածություն

1. Տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի և մրցակցության ոլորտները կարգավորող օրենսդրական նախաձեռնության ազդեցությունը համարվում է նշանակալի, եթե, ըստ փորձագիտական գնահատման, օրենսդրական նախաձեռնությունն ունի ուղղակի կամ անուղղակի, դրական կամ բացասական ազդեցություն շահառուների վրա սույն հավելվածի աղյուսակ 1-ով (և ըստ անհրաժեշտության՝ աղյուսակ 2-ով) սահմանված գործոններից առնվազն մեկով:
2. Սույն հավելվածի աղյուսակներ 1-ի և (կամ) աղյուսակ 2-ի համաձայն կարգավորման ազդեցության գնահատումը նշանակալի որակելու դեպքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը տալիս է փորձագիտական հիմնավոր կարծիք: Մրցակցության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատում իրականացնում է Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովը և արդյունքները տրամադրում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:
3. Շահառու է համարվում կարգավորման ազդեցությունն ուղղակի կամ անուղղակի դրական կամ բացասական ազդեցությունն իրենց վրա կրող սույն հավելվածի 4-րդ կետում սահմանված անձանց որոշակի շրջանակը (խումբը) կամ օրենսդրական ակտի գործողության ոլորտի սուբյեկտները (ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող միավոր, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է կամ կարող է կրել որոշակի իրավունքներ և պարտականություններ):

4. Շահառուներ են համարվում հետևյալ խմբերը՝

1) Տնտեսավարող սուբյեկտներ,

2) ֆիզիկական անձինք¹ կամ դրանց առանձին խմբեր՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ	
Գործոններ	Նկարագրություն
1.1 Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող կամ տնտեսավարող սուբյեկտների դեպքում՝	
ա) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների կողմից վճարվող պետական հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարումներ.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և չափով, անկախ ռեզիդենտության կարգավիճակից, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարման ենթակա հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարումներ կամ դրանց չվճարումից բխող տույժեր, տուգանքներ:
բ) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների համապատասխանության ծախսեր (compliance costs).	Ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ իրենց գործունեությունը նոր կարգավորումների պահանջներին համապատասխանեցնելու հետ կապված ուղղակի և անուղղակի ծախսերի (ծախսումների) ամբողջությունն է: Համապատասխանության ծախսերը հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարումներ կամ ծախսեր

¹ Այս համատեքստում որպես ֆիզիկական անձ դիտարկվում են օրինակ՝ նոտարները, փաստաբանները, քաղաքացիաիրավական այլ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող անձինք:

	(ծախսումներ) չհանդիսացող ծախսերն են, որոնք բաժանվում են երկու խոշոր խմբի՝ վարչական ծախսեր և էական ծախսեր:
գ) համապատասխանության ապահովման հետ կապված վարչական ծախսեր.	Սույն հրամանի իմաստով համապատասխանության ապահովման հետ կապված վարչական ծախսեր են համարվում բոլոր այն ծախսերը, որոնք կապված են շահառուների կողմից պետական կառավարման մարմիններին և երրորդ անձանց տեղեկատվություն տրամադրելու պարտավորությունների հետ: Տեղեկատվության տրամադրման պարտավորությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ 1) պարբերական հաշվետվությունների ներկայացումը պատկան մարմիններին, 2) ապրանքների մակնշումը կամ գնապիտակ փակցնելը, 3) տեղեկատվության տրամադրումը երրորդ անձանց, 4) անհատական թույլտվության կամ որևէ պարտավորությունից ազատվելու համար դիմումի ներկայացումը պատկան մարմիններին, 5) գործունեության առանձին տեսակների վերաբերյալ ծանուցման ներկայացումը, 6) գործունեության առանձին տեսակներով զբաղվելու համար լիցենզիա ստանալու հայտի ներկայացումը պատկան մարմիններին, 7) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց արտադրական

	գործընթացների կամ կառավարման համակարգի սերտիֆիկացման պահանջի իրականացումը, 8) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց արտադրանքի սերտիֆիկացման պայմանի ներդրումը, 9) պարբերական ստուգումների պահանջի ներդրման դեպքում գործարարի համար լրացուցիչ վարչարարության ծախս, 10) հարկային և այլ պետական մարմինների ստուգումների դեպքում համագործակցության պարտադիր պահանջի ներդրումը, 11) այլ տեղեկություններ տրամադրելու պարտավորություններ: Վարչական ծախսերի հաշվարկման նպատակով տվյալ պահանջների իրականացման համար անհրաժեշտ աշխատաժամանակը բազմապատկվում է միավոր աշխատաժամանակի վարձատրության չափով:
դ) համապատասխանության ապահովման հետ կապված էական ծախսեր.	Համապատասխանության ապահովման հետ կապված բոլոր այն ծախսերը, որոնք չեն հանդիսանում վարչական ծախսեր, համարվում են էական ծախսեր (ծախսումներ): Այդ ծախսերը ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ 1) իրականացման ծախսեր, որոնք կատարվում են շահառուների կողմից նոր կամ փոփոխված կարգավորումներին ծանոթա-

	նալու, համապատասխանության ապահովման գործողությունների ծրագիր մշակելու և առաջադրանքները բաշխելու համար: Իրականացման ծախսերը հիմնականում կարճաժամկետ, միանվագ ծախսեր են, 2) ուղղակի աշխատանքային ծախսեր, որոնք կարգավորման համապատասխանության նպատակով անհրաժեշտ աշխատանքները անմիջականորեն կատարելու համար նախատեսված անձնակազմի վարձատրության գծով կատարված ծախսերն են՝ ներառյալ վարձատրության նկատմամբ հաշվարկվող բոլոր հարկերը և վճարները, 3) վերադիր ծախսեր. վերադիր ծախսեր են համարվում տարածքի վարձակալության, գրասենյակային սարքավորումների ձեռքբերման, կոմունալ ծառայությունների, ինչպես նաև համապատասխանության ապահովման միջոցառումների վերաբերելի կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրման ծախսերը, 4) կապիտալ ծախսեր, որոնք սարքավորումների և այլ հիմնական միջոցների ծախսերը համապատասխանության ապահովման նպատակով ձեռքբերման ենթակա սարքերի և այլ հիմնական միջոցների գծով կատարվելիք ծախսերի ամբողջությունն է, 5) նյութական ծախսեր, որոնք արտադրական գործընթացներում օգտագործվող նոր նյութերի կամ ավելի թանկ նյութերի հավելյալ
--	--

	արժեքն են, որոնք անհրաժեշտ են կարգավորման համապատասխանությունն ապահովելու համար, 6) արտաքին ծառայությունների ծախսեր. մասնավորապես, սույն հրամանի իմաստով արտաքին ծառայություններ են համարվում բոլոր այն ծառայությունները, որոնք շահառուները ձեռք են բերում երրորդ անձանցից կարգավորման համապատասխանության ապահովման նպատակով:
1.2 Ֆիզիկական անձանց դեպքում՝	
ա) ֆիզիկական անձանց համապատասխանության ծախսեր.	Ֆիզիկական անձանց համապատասխանության ծախսերն այն ծախսերն են, որոնք առաջանում են իրավական պահանջների կատարման արդյունքում և կարող են ընդգրկել հետևյալ ծախսերը՝ 1) հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարումներ, 2) տեղեկությունների և փաստաթղթերի հավաքագրում, մշակում, պահպանում, ստուգում, 3) տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցում, 4) ծառայությունների ձեռքբերում, 5) ստուգումների հետ առնչվող աշխատանք, 6) սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռքբերում, 7) տեղաշարժման հետ կապված ծախսեր, 8) այլ համապատասխանության ծախսեր:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Գործոններ	Նկարագրություն
ա) տնտեսավարող սուբյեկտների թվի կամ շրջանակի սահմանափակում.	Այս ազդեցությունները կարող են տեղի ունենալ, երբ առաջարկվող կարգավորումը ներառում է ստորև նշված դրույթներից որևէ մեկը կամ մի քանիսը՝ 1) տնտեսավարող սուբյեկտ(ներ)ին ապրանքների մատակարարելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու բացառիկ իրավունքի շնորհում. 2) լիցենզավորման/ թույլտվության, արտոնագրման կամ հավաստագրման գործընթացի՝ որպես գործունեության պահանջի սահմանում. 3) առանձին տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հնարավորության սահմանափակում. 4) տնտեսավարող սուբյեկտների կողմից շուկա մուտք գործելու կամ շուկայից դուրս գալու հետ կապված ծախսերի էական աճ: 5) տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու, մարդկային ռեսուրսով ապահովելու, ներդրում կատարելու համար աշխարհագրական խոչընդոտի ստեղծում:

բ) տնտեսավարող սուբյեկտների՝ մրցակցության կարողությունների սահմանափակում.	Այս ազդեցությունները կարող են տեղի ունենալ, երբ առաջարկվող կարգավորումը ներառում է ստորև նշված դրույթներից որևէ մեկը կամ մի քանիսը՝ 1) սահմանափակվում է տնտեսավարող սուբյեկտների՝ ապրանքների, ծառայությունների, աշխատանքի համար գին սահմանելու հնարավորությունները. 2) սահմանափակվում է տնտեսավարող սուբյեկտների ապրանքներ, ծառայություններ, աշխատանքներ գովազդելու կամ շուկայահանելու հնարավորությունները. 3) սահմանում է ապրանքների, ծառայությունների, աշխատանքների որակի նկատմամբ այնպիսի չափանիշներ, որոնք որոշ տնտեսավարող սուբյեկտներին մյուսների նկատմամբ տալիս են մրցակցային առավելություններ կամ գերազանցում են իրազեկված սպառողների կողմից նախընտրելի չափը.. 4) առանձին տնտեսավարող սուբյեկտների համար ապրանքների, ծառայությունների, աշխատանքների ինքնարժեքի էական աճի հանգեցնող պայմանների սահմանում այլ տնտեսավարող սուբյեկտների հետ համեմատած (մասնավորապես, տարբերակված մոտեցում դրսևորելով շուկայում գործողների և շուկա նոր մուտք գործողների միջև)
--	---

գ) տնտեսավարող սուբյեկտների համար մրցակցելու խթանները նվազեցում.	Այս ազդեցությունները կարող են տեղի ունենալ, երբ առաջարկվող կարգավորումը ներառում է ստորև նշված դրույթներից որևէ մեկը կամ մի քանիսը՝ 1) ինքնակարգավորման կամ համակարգավորման ռեժիմի սահմանում. 2) տնտեսավարող սուբյեկտների ապրանքների, ծառայություններ, աշխատանքների գների, վաճառքի կամ ինքնարժեքի մասին տեղեկատվությունը հրապարակելու պահանջ կամ խրախուսում. 3) տնտեսական գործունեության առանձին տեսակի կամ առանձին տնտեսավարող սուբյեկտների գործունեության ազատում մրցակցության ընդհանուր օրենսդրության պահանջից:
դ) սպառողների ընտրության և նրանց հասանելի տեղեկատվության սահմանափակում.	Այս ազդեցությունները կարող են տեղի ունենալ, երբ առաջարկվող կարգավորումը ներառում է ստորև նշված դրույթներից որևէ մեկը կամ մի քանիսը՝ 1) սպառողների կողմից շահառուին ընտրելու վերաբերյալ որոշում կայացնելու հնարավորության սահմանափակում . 2) տնտեսավարող սուբյեկտների փոփոխության համար ուղղակի կամ անուղղակի ծախսերի բարձրացմամբ պայմանավորված սպառողների և տնտեսավարող սուբյեկտների միջև դինամիկայի կրճատում. գնորդների կողմից արդյունավետ գնումներ կատարելու

	համար պահանջվող տեղեկատվության շրջանակի հիմնարար փոփոխություն:
3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐ	
Գործոններ	Նկարագրություն
ա) տեղական, արտաքին առևտուր.	Այս ազդեցություններն ընդգրկում են տեղական և միջազգային առևտրային հոսքերը: Գնահատման նպատակով ուսումնասիրվում են ներքին և արտաքին առևտրաշրջանառության ծավալների փոփոխությունները:
բ) պետական աջակցության ծրագրեր.	Այս բաժնում գնահատվում է, թե առաջարկվող կարգավորումները ինչպես են ազդելու գործող պետական աջակցության ծրագրեր վրա:

5. Աղյուսակ 2-ում բերված գործոնների կիրառումը չի կրում պարտադիր բնույթ և դրանք գնահատում իրականացնողի հայեցողությամբ կիրառվում են այն դեպքում, երբ ազդեցության գնահատման ներկայացված իրավական ակտի նախագծի բովանդակությունն անմիջականորեն առնչվում է վերջիններիս:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐ

1. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐ	
Գործոններ	Նկարագրություն
1) Արտահանման և ներմուծման ժամանակ և ծախս.	Իրենից ներկայացնում է ապրանքների արտահանման և ներմուծման գործընթացի հետ կապված ժամանակը և ծախսը: Չափվում է բեռների

		արտահանման կամ ներմուծման ընդհանուր գործընթացի ընթացքում ընթացակարգերի երեք փաթեթների՝ փաստաթղթային համապատասխանության, սահմանների համապատասխանության ու ներքին փոխադրումների հետ կապված ժամանակը և ծախսը (բացառությամբ սակագների):
2) Ընկերությունների ընթացակարգերի ժամանակ և ծախս.	հինման քանակ,	Իրենից ներկայացնում է բիզնեսի գրանցման համար անհրաժեշտ ընթացակարգերի քանակը, ժամանակը, ծախսերը (մեկ շնչին բաժին ընկնող եկամտի մասնաբաժին (%)) և նվազագույն կապիտալը:
3) Հարկերի վճարման քանակ, ժամանակ և ծախս.		Իրենից ներկայացնում է այն հարկերը և պարտադիր վճարները, որոնք տիպային ընկերությունը պետք է վճարի տարվա կտրվածքով, ինչպես նաև դրանց վճարման և հետագա ընթացակարգերի համապատասխանության վարչական բեռը: Իր մեջ ներառում է՝ ➤ ժամերի քանակը, որը տիպային ընկերությունը ծախսում է տարվա ընթացքում ԱԱՀ-ի, եկամտային հարկի և շահութահարկի համապատասխանության ապահովման համար, ➤ տիպային ընկերության կողմից հարկերի և վճարների քանակի և շահույթի հարաբերությունը, ➤ տարվա ընթացքում հարկերի և վճարների մասով իրականացված վճարումների քանակը, ➤ ԱԱՀ հետ վերադարձի և համապատասխանության ժամանակը, շահույ-

	թահարկի հաշվետվության մեջ ճշգրտում անցկացնելու և վերջինիս արդյունքում օրենքին համապատասխանության ապահովման ժամանակատարությունը:
4) Սեփականության իրավունքի գրանցման քայլեր, ժամանակ և ծախս.	Իրենից ներկայացնում է բոլոր այն ընթացակարգերը (քանակ), ժամանակը (օրացուցային օր) և ծախսերը (գույքի արժեքի տոկոս), որն անհրաժեշտ է տնտեսվարողի կողմից հողի և շինության սեփականության իրավունքը մեկ այլ տնտեսվարողին փոխանցելու համար, ինչպես նաև հողի կառավարման որակը: Վերջինս գնահատում է ենթակառուցվածքի հուսալիությունը, տեղեկատվության թափանցիկությունը, աշխարհագրական ծածկույթը, հողային վեճերի կարգավորումը և սեփականության իրավունքի հավասար հասանելիությունը: